

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Խեցեգործություն

Խեցեգործարանում



Խեցեգործության արհեստանոց-արվեստանոցը գործում է ամբողջ ծավալով առավոտյան 8.45-ից մինչև ուշ երեկո: Նոր դպրոցի, Միջին դպրոցի սովորողները խեցեգործարանում աշխատում են իրենց հանրակրթական «Տեխնոլոգիա» և ընտրությամբ գործունեության ժամերին: Խմբերը հիմնականում բաղկացած են 10-12 սովորողից:

Կան սովորողներ, որոնք արվեստանոց են հաճախում նաև դասացուցակային ժամերից դուրս: Նրանք չորսն են, գալիս են ամեն օր, ժամը 15.00–ից, մինչև 16.00-ն և իրենց աշխատանքի դիմաց վարձատրվում են:

Պատրաստում ենք ձևավոր մոմակալներ, տարբեր չափի և նշանակության բաժակներ, ծաղկամաններ, թաղարներ, լոգոներ և կրթահամալիրի այլ խորհրդանիշներ:

Ստեղծված առարկաներն իրացվում են որպես նվերներ՝ դպրոցում կազմակերպվող միջոցառումների, տոների-ծեսերի և այլ առիթների ժամանակ: Սովորողները աշխատում են սիրով և մեծ նվիրումով:

Սովորողների մոտ կավի հետ աշխատանքը ձևավորում է մեծ համբերություն, ինքնուրույնություն, մեծացնում է պատասխանատվության զգացումը, շատ աշխատանքի արդյունքում բերում է մտքի և ձեռքի ներդաշնակության և վերջապես զարգացնում է երեխաների ձեռքի մոտորիկան: